

ԱՐԹՈՒՐ Ն ԱՅԵՍԱՄԱՆՑ

ՀԱՅԻ ԱԶԳԱՅԻ ԵՎ ԲԱՆԱԿԱՆ

ԵՐԱՎԱՆ ԱԿՅՈՒՄԱԿԱՅ

Ա · ՏԻՐԻ · Բ · ՇՐՋԱՆ

1862

ԹԻՒ 15 · ՍԵՊՏԵՄԲԵՐ 5

Հայուսակի ամիսը երկու անգամ . - Վեցամսեալ գինն է 5 դրամկ . - Խամբեն գուրս 6 դրամք . - Անձնար նամակ կամ ծրար շնորհունութք . - Կոտորագրութիւնների համբար ծացիկի գրաւենեակց . կիրիլի խան . - Խամբեն գուրս Մեծարգոյ գործականերն են , Կ Պօջիս , Խ . Թ . Գաղենակրեան . և Գր . Վ . Աւետեան , Գաղենակրեան , Գաղենակրեան . Հայեան , Յ . Ա . Մուրադ , Ֆարիզ , M. A. Mourad , Rue du Dragon , 26 .

ՈԳԻՆ ՀԵՅԵՍԵՆԵՍՅՅ

Ա.Ի.

ՀԱՄՕՐԻՆ ՀԱՅԿԱԶՈՒՆԱ

ՅՈՒՈՒԾՈ Բ .

Կամականի Հայերը և Արդի Հայերը .

Կամականի Հայերը՝ Կամականի Հայերը ըսելով՝ այս տեղս կուղեմ իմացնել նախնի պյան Հայերը , որոնք թէ խօսքով , թէ գործքով և թէ արիութեամբ քաջ հանդիսացած են՝ Հայենասիրութեան , աղասիրութեան , աշխարհաշինութեան և ուսումնասիրութեան մէջ : Խսկ Արտի Հայերը ըսելով կիմանանք՝ արդի անտարքեր , անհոգ , աղասիեաց , տղետ Հայերը :

Խօսքու դարձեալ Արամաններուն դարձնելով՝ կըսեմ :

Կամականի Հայերը՝ Հայենեաց՝ և անհատներու անմահ Ազատութիւնը վտանգի մէջ չզելու համար զինու զօրութեամբ և սիրալիք միութեամբ՝ զինութիւնը , պյան գժոնային Բռնութիւնը իսպասպուռ կործանելով՝ զայն իրենց սիրուն Հայենեաց սահմաններէն արտաքսելու փոյթ ունեցան և կարող եղան : Օրինակ , Հայկ՝ Կահապետը և իրեն քաջազն որդիները և թոռները և ուրիշ մարդիկը , երեք հարիւրի չափ անձեր՝ Ազատութեան և Հայենեաց նուիրական սիրով զինաւորեալ , Բէլ բռնակալին և անոր Հազար բիւրաւոր ժանտաժուտ և խուռներամ մարդկան գէմ ելնելով՝ իրենց Հայենիքը և իրենց անձերը աղատեցին՝ Բռնաւորութեան եղջիւրը խորտակելով և զայն կրողը Տարտարուին ահուելի վեշապներուն

ձեռք յանձնելով՝ և անոր հետևողները փախցընելով և ջարգելով :

Արտի Հայերը՝ բոլորովին մոռցած իրենց նախնի փառաւոր Հայրենիքը և Ազատութիւնը ու Ազգութեան կարգը լինելով՝ այժմ անհոգ կեցած են և որ ցաւալին է , իրենց թշրւառ վիճակէն գոչ են . անշարժ , ապուշ նստած՝ ժամանակը ամեն բիտի ընէ , և այն է ամեն իրողութեանց մայր , կըսեն : Խսկ ես կըսեմ , եթէ իրենց կողմանէ ջանք և աշխատութիւն չըլինի՝ թող չըսպասեն երբէք թէ ժամանակը պիտի բերէ ամեն բան , թող չըսպասեն բան թէ օր մի Հայոց Արփին պիտի ծագի՝ եթէ իրենց այս ընթացքը շարունակեն : Արդի Հայերը , կըսեմ , փոխանակ Կամանեաց հետեւ և Բռնաւորութիւնը այսինքն Տղիտութիւնը՝ իրենց մէջէն հեռացնելու , օր աւուր անոր գերի և ստրուկ կը լինին և այս ընթացքով՝ բոլորովին Գերութիւնը և Ստրկութիւնը վրանին պիտի հագնուն օր մի : Օրինակ , պյան Հայերը՝ որոնք Աահմանագրութեան , որ Հայ Ազգին կարդ , կանոն պիտի տայ ; Ազգային նորահաստատ Աահմանագրութեան , կըսեմ , մահը երազելով՝ ուրախութեամբ սրտի զուարժանալու կերթան , փոխանակ ողբեր՝ յօրինելու և զայն յանմահութիւն դարձնելու համար Դիմուը և բոլոր Աստուածները հայերը և անունները աղատելու հայերը :

Կամականի Հայերը՝ իրենց Ազգութիւնը փառաւոր ցուցընելու և իրենց լեզուն շատ տեղեր տարածելով՝ Հայ Ազգին յարդը աւելցնելու համար , ամեն բան աչք կառնուին , շատ արգ ելներու և իսկ շընդուներու քաջարար կը յազմէին , վերջապէս Յաղթութեան կամարներ կը կանգնէին և Յաղթական Դրօններ կը տնկէին : Օրինակ , Արամ , քաջ իմաստուն և Հայենասէր Կահապետը , իմաստուն և Հայենասէր Կահապետը , ի-

բեն քաջասիրտ Հայերովը, որ իրեն Հայրենեաց թշնամիները (Կոքար Մարտ, Բարչամ Բարել լացւոց և Պայապիս Կապագովկացւոց իշխանները) կը վունաէր և զանոնք իրենց զօրքերովը՝ անորսահմաններէն կը հալածէր, Հայրենասիրական սուրբ հուրով շնչաւորեալ, և ամեն աիրած աեղերը Հայերէն լեզուն և Հայութիւնը աարածել կը չանար:

Այդի Հայերը՝ փոխանակ իրենց Ազգութիւնը փառաւոր ցուցնելու օտարներու առջև, զայն պահելու անդամ հող չեն ըներ, փոխանակ իրենց լեզուն Օտար ազգերու մէջ տարածելոյ, իրենց մէջ անդամ մարդու պէս Հայերէն խօսող և զրող չդանուիր: Օրինակ, արդի Հայ Ազգին երեկելի կոչուածներէն շատերը՝ որոնք Ազգութիւն ինչ ըսել է չեն դիտեր և իրենց լեզուին վրայ կամ ամենն ին աեղեկութիւն չունին և կամ կիսամ միստու: Ազգերնին ինչ կուղէ թռալ լինի, հոդերնին անդամ չէ, որովհետեւ հաստատուն սկզբունքը և լուսաւոր դադախարներ չունին:

Կամինի Հայերը՝ Օտարներու հետ անդամ ըրած օրինաւոր խօսուումնին շրբելու և խօսումը՝ նազանց անունը չկրելու համար՝ արիութեամբ մահաւան կը գիմէին և Հայրենիքը օտարներու ձեռք քյանձննելու համար՝ մինչեւ իրենց վերջին չունը կը կուտէին քաջասրտութեամբ: Օրինակ, Վահաչէ, Հայկաղանց վերջին թաղաւորը, Դարեհ, Պարսից թաղաւորին խօսք տաւած լինելու իւր խօսքը կատարելու և իւր Հայրենիքը վասարար օտարի քյանձննելու համար՝ Ազգիսանդր Մակեդոնացի աշխարհասան թաղաւորին: դէմ ելաւ, մինչդեռ նա իւր Հայրենեաց վրայ կարցաւէր:

Այդի Հայերը, խօսուումն պահէլու թող ՚ի մի կողմ, իրենց Ազգին վնաս տիտափ դայ տիտափ չզայ հոգերնին չէ, անոր համար աշխատովը կը բարձրասեն, աղջապէր անձ մի՛ ապստամբ կը հռչակեն, Հայրենասէր անհատ մի՛ նենդաւոր կը զբարտեն և Ազգային Յառաջագիտութեան և Լուսաւորութեան հոգ աանող անզուզական անձները՝ իրեւքրէական յանցանք գործող կը մատնեն. և մինչեւ վերջին Ճիկերնին կը թափեն, ոչ թէ Հայրենեաց օգտին համար: Օրինակ, այն Հայերը՝ որոնք զԱհմանագրասէրները, Ճշմարիտ աղջասէրները՝ Բ. Դորու մատնելոյ շամշան և չըրնալիք բերաննին այնպիսի մատնութիւն մի արաւերեց, թէ արդինք մի չունեցաւ: Այն հին զլուխ հայերը, որոնք, Զոյիլասներու նման, իրենց թշնամիկան վրէքը և նախանձը լուծելոյ համար, աղջասէր և

Ճշմարիտ հայրենասէր անձ մի, Միւնատիի Երժիյաս աղջօգուս Լուսակիրն Խմբաղիրը, ըսել կուզեմ, Տէրութեան մատնեցին՝ զբարտութիւններու զօրութեամբ:

Կամինի Հայերը՝ Ազգաշինութեան և աղջին մէջ Ուսումնասիրութիւնը տարածելու նպատակաւ, շատ ջանքեր ըրին, գպրոցներ, կրթարաններ ու վարդարաններ և այլն հաստատեցին: Ազգային պատմութիւնը և ուրիշ օգտակար զբքեր Ազգին մէջ սփոելու համար՝ թարգմանութիւններ, քընութիւններ և մեկնութիւններ ընել կը տային, Օրինակ, Վաղարշակ հայրենասէր և ուսումնասէր Արշականի Հայ թաղաւորը և ետքերը Վամշապուհութիւնը մէջ յառաջացնելու համար, գպրոցներ, կրթարաններ և այլն կը հաստատէին, շահաւան զբքերու թարգմանութիւններ և հեղինակութիւններ ընել կը տային: Մարդեր կարոշէին Ազգային Պատմութիւնը և ուրիշ զիտութիւններ և բարոյականութիւն տարածելու համար:

Այդի Հայերը, կարծես թէ Ազգային Պատմութիւնը տարածուելուն, Ազգին մէջ Ուսումնասիրութիւն և Ազգասիրութիւն սփուռելուն գէմ են և միշտ լուսաւորեալ զաղափառներու հակոսնեայլ լինել կախործին: Օրինակ, հին զլուխ Հայերէն ումանք, որոնք երբեմն երբեմն զպրոցներ հաստատողները և հաստատ բնուղները միանդամայն կանիծեն, և Ազգին Յառաջագիտիմութեան համար եղած օրակիրները և բարենպատակ ընկերութիւնները վար կը զարնեն. . . . :

Կամինի Հայերը, Երկրագործութիւնը՝ Հայաստանի ամեն կողմերը տարածելու վութացին և շատ աեղեր աւ նոյնով չենցուցին ու շատ հարատութիւններ անոր միջոցաւ ժողովելու կարող եղան: Օրինակ, Երաւաշէս Բ. Արշակունի և Արմերատ Բագրատունի Հայ թաղաւորները, որոնք Հայաստան աշխարհէր Երկրագործութեամբ յառաջտանելու վոյթ ունեցան:

Այդի Հայերը, Երկրագործութեան պատուական արքեստը երեսի վերայ ձգած՝ զՀայաստանը ամայի, անմշակ, սողոնց որչ և զաղաններու կայարան լինելուն առջելը չեն առնուր: Թռալ այս Երկրագործութիւնը տարածելու համար հաստատուած Երկրագործական Ծնկերութիւնները, յառաջ առաջ առնելու չեն աճապարեր և չեն օգներ:

Կամինի Հայերը, Վաճառականութեան մէջ բաւական յառաջ զայած եին, և նախնի վաճառական աղջ երեն կը սեղուէին, Ծնոնք Հայաստանի Կրեելան կողմերու բերքերը հետեր

բուստ երկիր մի է : Ըստանց տարակուսի Գերբմանիոյ մէջ պէտք է փնտուել զայն : Իմ վերջին քննութեան է, ինքը վասնդալի դահավէժ մի , ետեւի կողմն կեցեր է : Ընկա ինծի համար ամեն գոները բացող բանալի մը լինել պարա էր , բայց կը վախեմ որ մի գուցէ գուռ մի բացած ժամանակս բերանը կոտրի : Ընմնեին տեղ մի յուսոյ ժառագայթ չեմ տեսներ , և արդէն ցրտութիւն մի կըզդամ՝ որ փոքր առ փոքր սրտիս զաւառը կը շահի , զոր օրինակ սպառցեալ հովը , ձմբու մերձենալոյ ժամանակները , ամեն բանէ կողոպտեալ դաշտերուն վերայ կը փէ :

Վերջո ի՞նչ պիտի լինի արդեօք . — Քսան և ութը տարեկան եմ և առանց տաղանդի ալ չեմ . բայց զբանիս մէջ ստակ մի անդամ չունիմ : Կատ ժամանակէ ՚ի վեր է որ հայրս ու մայրս զերեզմանատան դաշտը խոտերուն տակ կը հանդչին : Ո՛չ եղայր ունիմ և ո՞չ քոյր : Ունեցած չնչին ստակս սպառեցաւ : Պարաք , ո՞չ , ասիկայ կենաց ժանախան է . . . : Ի՞նչ մնաց ձեռքս ուրեմն : Բայց սակայն ես գարձեալ քաջութիւնը կորուսընել չեմ ուզեր : Ժաէ բնակարանիս և թէ կերակութիս ծախքերը վճարուած են . ոչ գերձակը , ոչ կոչկահարը և ոչ ալ լուցարար կինը՝ ինձմէ առնելիք ունին : Զբաւոր ատենադպրի մը համար մեծ բան է այս , և . . . կարծեմ ինծի պէս ըսողներ ալ քիչ կը դանուին :

Բ . —

Գրեթէ վեցը շաբաթ է որ նախընթաց խօսքերը դրած եմ :

Եյսօր կըսկսիմ զայն շարունակել :

Ճիշգ այսօր տրում տիսուր պատուհանը նստած էի : Փաղոցներուն մէջ ՚յոյեմբերի հովը կը մոնչէր . ապակիները քրտներ էին , և շիտակ ու բարակ զիծերը այլ և այլ պատահական իրեր կը նկարէին : Իմ մանաբքեան յարկս (1) ալ կարծես թէ ասոնց շնութեանը կօդնէր :

Փոքրիկ կրակարանին մօտեցայ , կրակը շակեցի , և զացի կաշիէ հին թիկնաթոռին վերայ նստայ , այս թիկնաթոռը իմ սենեկիկս մէջ դրած էր՝ բնակարանիս տիրուհին պառաւ բարի կինը , որ իւրհանդուցեալ հորը սիրելի աթոռն էր , կըսէր . իսկ ինքը վաթսուն տարեկան կը համրուէր : Ուստի , առանձին լինելու վաղաց հովը լինելու մէջ շնութեանը մէջ պարագայ ինչ անուն էր իւրաքանչիւր ոք յօժարակամ կը մտնէր , այնաեղ ներկայ եղաղը թէ կը զուարժանար և թէ պատիւ կը դանէր : Եյս այսպիսի ընկերութեան մէջ Ընթուանէթ առաջին աստիճանի մեծութիւն ունեցող պայծառ աստղի մը նման կը փայլէր : Զնա տեսնելը և սիրելը՝ մի և նոյն բանըն էր ինծի համար : Բայց ի՞նչովէս համարձակէի , իմ այն թշրուալ վիճակովս , աջուըներս գարձնել անոր վերայ՝ որուն չորս կողմը կը պատէին ինձի հասակակից աղնուական և հարուստ երիտասարդներ և անոր մեծարանքներ ընելու պատրաստ էին : Բաւական հեռի տեղ մի նստած էի ես , բոլոր մոտագրութիւնս և հոգիս աշերուս և ականջներուս վերայ էր : Բայց ի՞նչ որ լուսթեամբ կը խորհէր և

(1) Ճակատը (առէստը) շիփ շնուակ շնութած բնակարան :

միջոց և ժամանակ դանելոյ համար : Ո՞րչափ սենել կիս ջերմութիւնը կաւելնար , այնչափ իրենց թը ու իջը աւելի սրընթաց , աւելի ազատ և աւելի համարձակ կը լինէր , և միջոցն ու ժամանակը զանոնք երենց մէջ չէին կարող ամփոփել : Գիշերը վերայ համար , բայց ես մթութիւնը չասսի , չզգացիկ . . . քանզի Ընթուանէթի վերայ կը խորհէի : ՚լո՞ որ անձի մը վերայ սէր ունի , պայծառ լիւսոյ մէջ լողալու համար՝ ոչ կանթեղին և ոչ մոմի հարիկաւորութիւն ունի , և սիրաը ջերմ պահելու համար կրակարանին մէջ շատ կրակի պէտք չունի :

Եյսւասիկ Ընթուանէթի ովլ լինելը .

Որոտոլֆի դաստորը երջանիկ մարդ մի էր : Դատաւոր լինելոյն՝ շատ մեծ հարստութիւն և զեղանի և սիրայօդ ընտանիք մի ունէր . իւր ընտանիքը կը բաղկանար՝ արիստիրու կինէ , ճարտար ու դործունեայ տան տիրինէ մի , և երեք օրիորդներէ , ասոնց կրտսերազոյնը զեղեցիկ էր , միջինը զեղեցկապոյն , իսկ անդրանիկը , որ Ընթուանէթ կը կոչուէր , հրեշտակի կը նմանէր :

Եռաջին անգամ սյս տանը մէջ սովորեցայ աշխարհի ամենամեծ երջանիկութիւնը հանչելը , ընտանեկան կենաց երջանկութիւնն է ըստած , այնպիսի կենաց՝ որ պարզ , հանդաբար և սիրալիք է , և որ օրաւուր աւելի հազուադիւտ կը լինի այս : Եյսանու մարդ քաղցր խաղաղութեան անուշահութութիւնը կը չնչէ , մեծաւ հիացմամբ : Ընտանեաց բոլոր անդամները մի և նոյն կապով միացած էին , և այս կապն էր ամենասպուր , ամենասուրբ և անձնանուէր սիրոյ կապը : Եյս ընտանեաց մէջ պարելու համար կիշերային ակումբներ և պատուական շանկաներով՝ մեծածախի ընթրիքներ չեին լիներ : այնաեղ նուադուուներու միաձայն դաշնակութիւններ (քանտիթիւններ) չեին տեսնուէր և չեին խալար այնաեղ , բայց սակայն գարձեալ այնպիսի տուն մի էր , ուր իւրաքանչիւր ոք յօժարակամ կը մտնէր , այնաեղ ներկայ եղաղը թէ կը զուարժանար և թէ պատիւ կը դանէր : Եյս այսպիսի ընկերութեան մէջ Ընթուանէթ առաջին աստիճանի մեծութիւն ունեցող պայծառ աստղի մը նման կը փայլէր : Զնա տեսնելը և սիրելը՝ մի և նոյն բանըն էր ինծի համար : Բայց ի՞նչովէս համարձակէի , իմ այն թշրուալ վիճակովս , աջուըներս գարձնել անոր վերայ՝ որուն չորս կողմը կը պատէին ինձի հասակակից աղնուական և հարուստ երիտասարդներ և անոր մեծարանքներ ընելու պատրաստ էին : Բաւական հեռի տեղ մի նստած էի ես , բոլոր մոտագրութիւնս և հոգիս աշերուս և ականջներուս վերայ էր : Բայց ի՞նչ որ լուսթեամբ կը խորհէր և

Ո՞ր անխիղջ որդիքդ արիւնդ են ծծում, Ա՞մա՞ս քեզ ինսդրելով, անքանդ Հայատան : Կիթապաշտութիւնն մահու կապանքով, Խեղդել է նոցա իւր ծանր Ծի տակ, Զեռներն ու ոսոներն պինդ կաշկանդելով, Վարում է անդիւտ կորստի յատակ :


Ո՞ի ո՞ւ ո՞չամ, ո՞չամ ո՞ւ ո՞ի, Ա՞մամածունկ քո ընտրեալների, Սոքա են նոցա էութեան կեդրոն, Կեանքի նպատակ, Աստուած ու կրօն : Ո՞վ աղբատութիւն, սուրբ աքսորական, Օ՞սէլու եմ քեզ իմ անձս յաւիտեան, Ծող սարկացած գարերով մարդիկ, Դնեն իմ վերայ նղովքի կընիք :

Օմազ սրէ չար լեզուն անդօր թշնամին, Թասիկելով վերաս թաւնաւոր սլքքներ, Ես սիտի խնդրեմ, ազգ իմ, լալազին, Պանկոխ եղած քո իրաւունքներ :

Ու ոք չէ կարող հոգուս նպատակ, Ճնշել, խորտակել բռնութեան կէնքով. Ո՞ւ սուր, ո՞չ արին, ո՞չ բանտ, ո՞չ կայծակ, Ո՞ւ նոյն իսկ զեհեն մշտավաս բոցով : Օմազ անմիտ մարդիկի փրփրան ու զոչեն — Ճնպէհեր հողին կ'մնայ միշտ աղատ . Օմազ ալիք ժայոին զարկեն ու կոծեն, Կա ծաղը առնելով կ'մնայ միշտ հաստատ :

Բայց սրասիցէք դուք, որդիք խաւարի, Կը զայ ձեր վերայ աչեղ դատաստան . Երան զբաւելու չեն ձեր սոկելի, Պարկեր ու զանձեր սե հարստութեան : Կ'երթան կ'անցանեն այս զառն օրերը, Կը զայ երեան նոր ազգ, նոր կեանքով. Կա կը դատէ ձեր վատթար զործերը, Վամթու արձան ձեզ կանդնեցնելով :

Ա. Շահաղվեանց
(ՀԻՒՄԱՆԱՅԻ 1862 ԱՄՍՏԵՐԴԱՄ)



ՀԵՄԱՓՈՅ ՔԵԴ ԵՐԵՎԱՐՈՒԹԻՒՆ

(ՏԵ՛՛ թէ 14. Ե՛՛ 111.)

Ճ.:

Վարժուածք :

Անքաղաքավարի շարժումներ են
1. — Նոսած աթոռը անդադար շարժել, 2. — Ծոռնկ ծնկան վրայ գնել և վրայինը շարժակ շարժել :

3. — Ոչինչ բաներու վերայ անմտարար բարձր ձայնով ծիծաղել, և կամ բերանաբաց ապուշ ապուշ զմայլած նայիլ :

4. — Երգի կամ նուագարանի ձայն առածին սէն իսկոյն սկսիլ երգել, կամ ոտքը և ձեռքը զարուել :

5. — Ոտքով քովը դանուողներուն աթոռը շարժելով անսնց անհանդ իստ ընել :

6. — Որևէ է անձի մը խօսքը կամ դորձը արշամարչելու համար ուսերը վեր վեր ընել :

7. — Ըստայ ձեռքը բերանը գնելու՝ սկսիլ երկար երկար յօրանջել, և երբեմն յօրանջելը հերիք չափելով՝ թեերն ու ոտքերը ասդիս անդին երկացնել :

8. — Մարդու պէս շնորհով չնորհքով բարետալ անդամ չգիտնալ :

9. — Խօսելու ժամանակ շատ անդամ և շարունակ ձեռքերը շարժել, որ և անմտութեան նըշան է :

10. Եթէ կին մի կամ օրինորդ մի է խօսելու ժամանակ ձեռքը միշտ շարժազը՝ աւելի ծիծաղելի լինինա, ինչու որ կիները պարաւաւոր են աւելի համեստ լինել և անկիրթ շարժումներ չունենալ, ընկերութեանց մ. ջ. :

11. — Խօսելոյ ժամանակ ձեռքը մի տեղէ ուրիշ տեղ զնել հանել :

12. — Զեռուըները կոնակը տանել և իրար կապել և բնաւ դորձ մի չըրածի պէս նստել՝ ասիկ անհոգութեան, ծուլութեան և անխոհեմութեան նշան է :

13. — Ենոդուտ մարդու կամ անհոգի արձանի մը նման՝ պէտք չէ թեերը անշարժ կախել և մարածի պէս կենալ :

14. — Փէտք չէ ոչ խիստ շատ բարձր բըսնել հապարա կամ ինքնահաւաւն մարդու մի պէս, և ոչ ալ շատ ցած, դերիկ կամ յանցաւոր անձի մը նման :

15. — Փէտք չէ ոչ խիստ շատավ քայլել և խիստ ծանր, այլ միջնը ընտրել :

16. — Քայլելու ժամանակ ոտքերը ուժով գետինը զարնելը բեռնակիրի զործ է :

17. — Անքաղաքավարութիւն և անխելքութիւն է շարժելու կամ քայլելու ժամանակ արուեստակութիւն զործածելը և կտոր լինելը :

18. — Բարեկիրթ և բաղաքավարը կը նայի որ միշտ կրցածին չափ անձառնի շարժումներէ հեռու

շրի կողմը, տարուան մի, այսինքն երեք հարիւր վաթուն և չինդ օրուան մէջ, ձուածե դժի մը (օրուն ջանդ խառարման անուն կըտան աստղագետք) վրայէն անցնելով: Աստղագետները այս դժին ըջանակը 825 մլիոն հազարամեթրէն աւելի կը հաշուեն. հետեաբար օրուան մի մէջ 2,260,000 հազարամեթր, ժամուան մէջ 94,160 հազարամեթր և վայրկենի մը մէջ 1600 հազարամեթր տեղ կընէ մեր Երկիրը: Բայ համեմատութեան կանոնաց՝ երկրիս տեղափոխական շուտութիւնը հարիւր քսան անգամէն աւելի մեծ է, քան զթնթանօթի մը գընդակին արագութիւնը: Խսկ իւր վերայ հոլովման շուտութիւնը, երկրիս երեսին իւրաքանչիւր կէտերուն՝ առանցքէն հեռանալուն համեմատ կը լինի: Հասարակածին տակ քսան և չորս ժամուան մէջ 36000 հազարամեթր է, որ ըսել է 26 հազարամեթր՝ վայրկենի մէջ, կամ 470 մեթր տեղ երկրորդական վայրկենի մէջ, Ճիշտ թնթանօթի գնդակին շուտութեան հաւասար:

Այսպիսի սոսկալի շուտութիւն ունեցող կըրկնակի շարժմանց մէջ կը զտնուինք՝ առանց մեր զդալուն, նյոյնպէս երկրիս դպչող ամեն առարկայնը հաւասարակապէս հաղորդ են այս շարժումներուն: Արդ՝ Կերոնախոյ անուանեալ զօրութեան մի ձեռքով՝ երկրագունածիս հոլովման ժամանակ, մինչեւ անգամ ոչ միայն իրեն վերայ բնակող արարածները, իրեն չորս դին պատող առարկայները, հապա նաև այն նիւթեղէն մասնիկները՝ որոցմով ինքը կազմուած է, հեռաւոր տեղեր կը նետուին՝ եթէ ծանրութիւն կամ Կերոնախի ըստուած ուրիշ զօրութեամբ մի դէպ'ի կեդրոնը քաշուած և հաստատուն բռնուած չլինին:

Այսպէս խօսելինէս յետոյ, երեակայենք նախ և յառաջ որ մեր մոլորակին՝ արեւուն չօրս կողմը ըրած տեղափոխական շարժումը յանկարծ դադրի: Երկրիս Ճիշտ այն բոպէին ունեցած շուտութիւնը, իւր երեսը գտնուած առարկաներուն իւրաքանչիւրն ալ կունենայ հարկաւ, և այն ժամանակ անոնց իւրաքանչիւրին պիտի պատահի, բայց աւելի սասակապէս, ինչ որ կը պատահի այն ճանապարհորդերուն՝ որոնք աճապարանօք ճամբար յարած ժամանակնին յանկարծ արդելք մի դիմացնին ենէն և իրենց ընթացքը ընդմիջէ: Իրենց մէջ եղած շարժումը պիտի շարունակի մի և նոյն արագութեամբ՝ ինչ որ զանդուածը ունէր իւր դադարման միջոցին: Այսպէս մարդիկ, կենդանիները, քարերը, Ուկիանի և գետերու ջրերը՝ սոսկալի արագութեամբ պիտի նետուին և խոռն ի խոռն լիտառման օդին ուղղութեամբ պիտի դիմեն, որովհետեւ այն ժամանակ ձգողական զօրութիւնը՝ անկարող պիտի լինի:

զանոնք հաստատուն բոնելու և լինչև անզամ ժայռերն ու լեռները իրենց հիմքէն պիտի խախտուին, ծառերը արմատաքի պիտի խլուին . . . : Ասկիայ խիստ հետաքրքրական տեսարան մի պիտի լինի տեսնելու համար . . . բայց հեռուանց :

Այսպիսի աղետալի արկած մի կրնայ լինել միայն ուրիշ մարմայ, կամ զ խաւորի և կամ որ ե է արգ ելքի մի հանդիպելովը՝ որ երկրիս իր ճամբուն վերայ վրապելովը տեղի կունենայ: Երկիրը բոլորովին կը փշի և կունչանայ, և այն արդելքին ևս նոյնը կը պատահի, եթէ դիցազնական զօրաւոր կաղմութիւն մի և սոսկալի կարծրութիւն մի չունենայ:

Եթէ երկրիս իւր վերայ հոլովումը միայն յանկարծ դադրի, այս ալ մի և նոյն արդիւնքը կունենայ:

Կերոնախոյ շըրութիւն միջնորդութեամբ երկրագունածին երեսը դանուած մարմինները՝ հեռի կը նետուին՝ որչափ հասարակածին մօտ լինին՝ այնչափ աւելի արագութեամբ: Ջրերը ուժգնապէս կը բարձրանան, յետոյ խոռն ի խոռն Կերոնախի շըրութիւնները կը մղուին, և այն ժամանակ ամեն տեղ կը տարածին: Երկրիս կարծր կեղեքը, որուն թանձրութիւնը՝ ըստ բարձրագոյն հաշիւներու՝ եթէ 20 հազարամեթրը չանցնի, կտոր կտոր կը խորտակուի. և երկրիս ներքին կողմի հալած նիւթերը ամեն տեղ կը տարածուին:

Երեակայենք նաև՝ եթէ Կերոնախի շըրութիւնը անհետի. ո՛չ, այն ժամանակ ընդհանրական քակուամն կը պատճառի, ի քթթել ական, ջրերը կը գոլորշանան, երկրային կեղեքը կը խորտակուի ու կը չարգուի, Երկրագունածը՝ մառախլապատ զանդուած մի կը դառնայ և անջրապետութեան մէջ կը կորնչի, Աստուած դիսէ ո՛ւր երթալով, արեգակին մէջ, լուսնոյ մէջ, բաց ի մեր տեղէն ամեն տեղ կրնայ երթալ. պիտի եթէ հանդիպի երկրիս յաւիտեան տիեզերաց ցանկին մէջէն բոլորովին կը չնջուի:

ՀԵՐՑՈՒՄԻՄ:

ԺԿ: Մարդուս ներսը՝ ժամուան մի մէջ եղած օդակար օդոյն քանակութիւնը հրչափէ:

ՀԱՐՑՈՒՄԻՄ – ՏՆՈՐԴ:

ԳՅ. Պ. ՊԱՐՏԻՉՉՈՒՅԵՍ

Զ Մ Ի Տ Ա Խ Ե Ւ

• Տ Պ Ա Ր Ա Վ Ա Լ Տ Ե Խ Ա Ա Ն